«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան՝ ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորական եզրակացություն

31 դեկտեմբերի 2013թ.

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ..... 1

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ և ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ..... 2

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ..... 3

ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....4

pwc

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի բաժնետերերին և տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և վերջինիս դուստր ձեռնարկությունների (այսուհետ միասին՝ «Խումբ») 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Վերոհիշյալ ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն Ընկերության ղեկավարության պատասխանատվությունն է: Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել, թե արդյոք ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են:

Մենք աուդիտի ենք ենթարկել Խմբի 2013թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնց հիման վրա պատրաստվել են ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: 2014թ. ապրիլի 30-ի մեր եզրակացությունում մենք կարծիք ենք արտահայտել առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ճշմարիտ են ներկայացնում բոլոր էական առումներով Խմբի ֆինանսական վիճակը առ 2013թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են համախմբված ֆինանսական հաշվետվություններին, որոնց հիման վրա դրանք կազմվել են և որոնց վերաբերյալ մենք դրական կարծիք ենք արտահայտել:

Խմբի ֆինանսական վիճակի, տվյալ ժամանակահատվածում գործունեության արդյունքների և մեր անցկացրած աուդիտի շրջանակների վերաբերյալ առավել հստակ պատկերացում կազմելու համար ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները պետք է դիտարկել այդ ամփոփված համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմելու համար հիմք հանդիսացած համախմբված ֆինանսական հաշվետվությունների և մեր աուդիտորական եզրակացության հետ միասին:

Ալտաֆ Տապիա
Տնօրեն

Սերգեյ Յակովլև
Աուդիտոր

PricewaterhouseCoopers Armenia LLC.

30 ապրիլի 2014թ.
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն

«ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, Երևան 0001, Հյուսիսային պողոտա 1, «ՆՈՐԴ» բիզնես կենտրոն, 6-րդ հարկ
Հեռ.՝ (37410)592159, ֆաքս՝ (37410)501341, www.pwc.com/am

մլն. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2013թ.	31 դեկտեմբերի 2012թ.
ԱԿՏԻՎՆԵՐ		
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	332,046	343,401
Ոչ ընթացիկ ակտիվների գծով կանխավճարներ	9,244	9,634
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	717
Տրամադրված փոխառություններ	186	209
Հետաձգված հարկային ակտիվներ	11,140	-
Շահութահարկի գծով ոչ ընթացիկ կանխավճարներ	624	620
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	402	389
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**353,642**	**354,970**
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	11,247	13,778
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	809	80
Տրամադրված փոխառություններ	281	109
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	55,188	35,916
Շահութահարկի գծով կանխավճար	850	842
Ժամկետային ավանդներ	2,496	606
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11,240	7,503
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**82,111**	**58,834**
Ընդամենը ակտիվներ	**435,753**	**413,804**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Կանոնադրական կապիտալ	312,072	312,072
Կուտակված վնաս	(119,908)	(95,159)
Ընդամենը սեփական կապիտալ	**192,164**	**216,913**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	52,118	61,695
Ակտիվներին վերաբերող շնորհներ	435	475
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**52,553**	**62,170**
Ընթացիկ պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	124,991	77,361
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	66,045	57,360
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**191,036**	**134,721**
Ընդամենը պարտավորություններ	**243,589**	**196,891**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**435,753**	**413,804**

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2014թ. ապրիլի 30-ին:

Վարդան Հարությունյան
Վարչության նախագահ - գլխավոր տնօրեն

Արմեն Ունանյան
Գլխավոր հաշվապահ

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ

Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

մլն. ՀՀ դրամ	**2013թ.**	**2012թ.**
Հասույթ	206,159	182,116
Վաճառքի ինքնարժեք	(215,339)	(219,562)
Համախառն վնաս	**(9,180)**	**(37,446)**
Այլ գործառնական եկամուտ	2,014	1,043
Ընդհանուր և վարչական ծախսեր	(7,772)	(7,332)
Այլ գործառնական ծախսեր	(4,636)	(2,996)
Գործառնական վնաս	**(19,574)**	**(46,731)**
Ֆինանսական եկամուտ	384	634
Ֆինանսական ծախսեր	(16,652)	(14,105)
Վնաս մինչև հարկումը	**(35,842)**	**(60,202)**
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	11,093	(6,002)
Տարվա վնաս	**(24,749)**	**(66,204)**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**(24,749)**	**(66,204)**

	Ընկերության սեփականատերերին վերագրելի		
մլն. ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 2011թ. դեկտեմբերի 31-ը	**312,072**	**(28,955)**	**283,117**
Ընդամենը 2012թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	(66,204)	(66,204)
Մնացորդը առ 2012թ. դեկտեմբերի 31-ը	**312,072**	**(95,159)**	**216,913**
Ընդամենը 2013թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-	(24,749)	(24,749)
Մնացորդը առ 2013թ. դեկտեմբերի 31-ը	**312,072**	**(119,908)**	**192,164**

մլն. ՀՀ դրամ	**2013թ.**	**2012թ.**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վնաս մինչև շահութահարկով հարկումը	(35,842)	(60,202)
Ճշգրտումներ.		
Մաշվածություն	12,424	12,065
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկում	2,161	170
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման վերականգնում	(213)	-
Հիմնական միջոցների օտարումից զուտ վնաս	329	482
Եկամուտ շնորհված հիմնական միջոցներից	(68)	(86)
Փոխարժեքային տարբերություններից զուտ վնաս	1,189	5,657
Տոկոսային եկամուտ	(384)	(634)
Տոկոսային ծախս	16,319	10,049
Եկամուտ առևտրային կրեդիտորական պարտքերի հրաժարումից	(295)	-
Պահուստների փոփոխություն	(198)	(100)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր մինչև շրջանառու կապիտալի փոփոխությունները	**(4,578)**	**(32,599)**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի աճ	(21,146)	(6,909)
Պաշարների նվազում / (աճ)	4,452	(5,984)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի աճ	40,733	47,023
Շրջանառու կապիտալի փոփոխություններ	**24,039**	**34,130**
Վճարված շահութահարկ	(68)	-
Վճարված տոկոսներ	(9,083)	(7,530)
Գործառնական գործունեությունից / (գործառնական գործունեությամբ օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**10,310**	**(5,999)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(3,720)	(9,317)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	65	521
Ժամկետը լրացած ավանդների մարում	656	400
Նոր ավանդների տեղաբաշխում	(2,526)	(400)
Ստացված տոկոսներ	307	574
Պարտատոմսերի վաճառք	-	8
Տրամադրված փոխառություններ	(209)	(153)
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցների հոսքեր	**(5,427)**	**(8,367)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հոսքեր տրամադրված փոխառությունների մարումից	115	228
Հոսքեր վարկերից և փոխառություններից	196,404	149,849
Վարկերի և փոխառությունների մարում	(197,650)	(139,267)
(Ֆինանսական գործունեությամբ օգտագործված) / ֆինանսական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքեր	**(1,131)**	**10,810**
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(15)	(25)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	**7,503**	**11,084**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	**11,240**	**7,503**